

Ճապոնիայի գյուղատնտեսական կրթական համակարգը

Վարդան Ուռուտյան, տ.գ.թ.

ՀԳԱ Ազոբիզնեսի դեպարտամենտի դասախոս, հետազոտող և խորհրդատու

378.63 (520)

ԱՄՆ Գ.Դ ՄԱԾ

Հոդվածը հեղինակի և Տոկիոյի գյուղատնտեսական համալսարանի Միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրության դեպարտամենտի պրոֆեսոր Ակիմի Ֆուջիմոտոյի համատեղ աշխատանքի արգասիքն է, որոնց ծանոթությունը տեղի է ունեցել Գյուղատնտեսական կրթության և գիտության գլոբալ կոնսորցիումի (GCHERA) Կիևում կայացած 3-րդ միջազգային կոնֆերանսի ժամանակ: Հոդվածում ներկայացված է գյուղատնտեսական կրթության Ճապոնիայի փորձը, որը հեղինակի կարծիքով հետաքրքիր կլինի ՀՀ ԲՈՒՀ-երի, հատկապես Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի, մագիստրական և ասպիրանտական ծրագրերի ղեկավարների համար:

Ճապոնիայի կրթական համակարգի ընդհանուր նկարագիրը

1947 թ. Ճապոնիայում ընդունվեց «Կրթության հիմնական օրենքը», համաձայն որի կրթական համակարգի մեջ մտնում են տարրական դպրոցը, կրտսեր դպրոցը (միջին դասարաններ), ավագ դպրոցը (բարձր դասարաններ) և համալսարանը: Տարրական և կրտսեր դպրոցներում ընդունված է պարտադիր ուսուցում, որի տևողությունը 9 տարի է: Տարրական դպրոցում ուսուցումը սկսվում է 6 տարեկանից, թեև երեխաների մեծամասնությունը 3-4 տարեկանից սկսած հաճախում է մանկապարտեզ կամ նախակրթարան: Երեխաների մոտ 95%-ը, ավարտելով պարտադիր ուսուցումը, շարունակում է ուսումը բարձր դասարաններում:

Ճապոնիայում, ըստ հիմնադիրների, ուսուցումը տարվում է 3 կարգի կրթական հաստատություններում՝ պետական, հանրային և մասնավոր: Պետական ուսումնական հաստատությունները հիմնադրվում են Ճապոնիայի կենտրոնական կառավարության և Մշակույթի, կրթության, գիտության, սպորտի և տեխնոլոգիայի նախարարության (MEXT - Ministry of Education, Culture, Sport, Science and Technology) կողմից: Հանրային հաստատությունները ստեղծվում են նահանգային կամ քաղաքային կառավարությունների կողմից, իսկ մասնավոր հաստատությունները՝ Կրթական կորպորացիայի կողմից (Education Corporation):

Այսպիսով, եթե դպրոցական կրթությունը ներկայացնենք եռաստիճան սանդղակով՝ առաջին աստիճանի կրթություն, երկրորդ աստիճանի կրթություն և երրորդ աստիճանի կրթություն, ապա առաջին աստիճանի կրթությունն ապահովում են տարրական դպրոցները, իսկ երկրորդ աստիճանի կրթությունը՝ կրտսեր և ավագ դպրոցները: Ավագ դպրոցից հետո հնարավորություն է ընձեռվում ստանալ երրորդ աստիճանի կրթության, որը զարգանում է 3 հիմնական ուղղություններով՝ ակադեմիական բարձրագույն դպրոց, մասնագիտական դպրոց և տեխնիկական քոլեջ: Ակադեմիական և մասնագիտական դպրոցներում ուսուցումը 3 տարի է, տեխնիկական քոլեջներում՝ 5 տարի: Մասնագիտական դպրոցների շարքում գործում է նաև գյուղատնտեսության մասնագիտացված դպրոց:

Երրորդ աստիճանի կրթության հնարավորությունը ուսանողներին տալիս է մի շարք առավելություններ: Նրանք կարող են հաճախել համալսարան, կրտսեր քոլեջներ և հատուկ վարպետացման ինստիտուտներ: Կրտսեր քոլեջներում և հատուկ վարպետացման ինստիտուտներում կրթությունը 2 տարի է, իսկ համալսարաններում՝ 4 տարի: 2000 թ. դրությամբ Ճապոնիայում գործում էր 649 համալսարան և 572 կրտսեր քոլեջ: Համալսարաններից 99 – ը պետական էր, 72-ը՝ հանրային, իսկ 478-ը՝ մասնավոր: Պատկերը նույնն էր նաև կրտսեր քոլեջների համար, որոնց 87%-ը մասնավոր էր: 2000թ. Ճապոնիայի համալսարաններում ընդգրկված էին մոտ 2.74 մլն ուսանող, որոնցից 73%-ը սովորում էր մասնավոր համալսարաններում: Կրտսեր քոլեջներում սովորում էր 328,000 ուսանող, որոնց 91%-ը նույնպես հաճախում էր մասնավոր հաստատություններ:

Այստեղ կարելի է նշել մի քանի հստակ միտում: Նախ, համալսարանական ուսանողների քանակը արագորեն աճել է, կապված բնակչության շրջանում եկամտի և բարձրագույն կրթության պահանջարկի աճի հետ: Եթե 1955թ. համալսարաններում սովորում էր 523,000 ուսանող, 1970 թ.՝ 1.4 մլն, ապա 1990թ.՝ 2.1 մլն. ուսանող: Այնուհետև, կանանց սոցիալական կարգավիճակի բարելավման շնորհիվ, իգական սեռի համալսարանական ուսանողների քանակը նույնպես բավականին աճել է: Եթե 1955թ. ուսանողների 12%-ը իգական սեռի էին, ապա 2000թ. այդ թիվը անցնում էր 36%-ից: Վերջապես, կարևոր է նշել այն, որ կրթության և գիտության արդյունավետության բարձրացման նպատակով, բոլոր պետական համալսարանները կվերածվեն ինքնավար կորպորացիաների և 2004թ. ապրիլից կանցնեն ինքնակառավարման՝ ճանապարհի հարթելով մոտ ապագայում պետական համալսարանների մասնավորեցմանը: Ճապոնիայի համալսարանական կրթությունը ներկայումս թևակոխում է մրցակցության նոր փուլ:

Գյուղատնտեսական բարձրագույն կրթությունը Ճապոնիայում

Ներկայումս Ճապոնիայում գործում է 52 համալսարան, որոնք առաջարկում են բակալավրական ծրագրեր գյուղատնտեսության ոլորտում: Այս համալսարաններից 34-ը պետական են, 6-ը՝ հանրային, իսկ 12-ը՝ մասնավոր: Բոլոր համալսարանները (բացի 2 հանրային համալսարանից) ունեն մագիստրական և ասպիրանտական (Ph.D) ծրագրեր: Չորս պետական համալսարաններ այնքան փոքր են, որ ինքնուրույն չեն կարող իրականացնել վերոհիշյալ ծրագրերը, այդ իսկ պատճառով միացյալ ուժերով են առաջարկում մագիստրական և ասպիրանտական կրթություն: Բակալավրատուրայի գյուղատնտեսության և հարակից մասնագիտությունների ֆակուլտետներում ընդգրկված է 14,193 ուսանող, որոնցից 47%-ը, 4%-ը և 49%-ը սովորում են համապատասխանաբար պետական, հանրային և մասնավոր համալսարաններում:

Տոկիոյի գյուղատնտեսական համալսարանը (TUA) ունի ուսանողների ամենամեծ քանակը՝ 2,417 ուսանող, որը կազմում է Ճապոնիայի գյուղատնտեսական մասնագիտության ուսանողների 17%-ը:

Մագիստրական ծրագիր գործում է 33 պետական, 4 հանրային և 11 մասնավոր համալսարաններում: Մագիստրատուրաներում սովորում են ընդամենը 3,307 ուսանող, որոնց 81%-ը ընդգրկված է պետական համալսարաններում: Բոլոր պետական համալսարանները, ինչպես նաև 4 հանրային և 11 մասնավոր համալսարանները, ունեն ասպիրանտուրաներ կամ դոկտորական ծրագրեր: Ասպիրանտների ընդհանուր թիվը 960 է, որի 90%-ը կրկին ներգրավված է պետական համալսարաններում: Այստեղից հստակ երևում է, որ մասնավոր համալսարանները մեծ ուշադրություն են դարձնում բակալավրատուրայի վրա, իսկ պետական համալսարանները՝ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի վրա:

Ինչևէ, հաշվի առնելով Ճապոնիայի գյուղատնտեսական հատվածի չափերը, կարելի է ենթադրել թե, գյուղատնտեսական ֆակուլտետների քանակը, հատկապես պետական համալսարաններում, ավելի շատ է, քան անհրաժեշտ է:

Անցյալում գյուղատնտեսությունը Ճապոնիայի հիմնական «արդյունաբերությունն» էր, և գյուղատնտեսական գիտությունը նշանակալի դեր խաղաց Ճապոնիայի տնտեսական զարգացման գործում: 1945թ., համաշխարհային պատերազմի ավարտից առաջ, Ճապոնիայում գործում էին ընդամենը 5 համալսարան՝ 4-ը թագավորական և 1 մասնավոր, որոնք իրավունք ունեին իրականացնել բակալավրային կրթություն և շնորհել գյուղատնտեսական գիտությունների դոկտորի կոչում (Matsuda 2003): Դրանք էին Հոկայդոյի, Տոկիոյի, Կիոտոյի և Կյոտոյի թագավորական համալսարանները և Տոկիոյի գյուղատնտեսական համալսարանը: Այս ավանդույթը շարունակվում է մինչև օրս, և մագիստրական ու ասպիրանտական ուսանողների մեծ մասը կենտրոնանում են այս հաստատություններում: 1947թ. նոր կրթական համակարգի ներդրումով գոյություն ունեցող գյուղատնտեսության հատուկ մասնագիտացման դպրոցները վերածվեցին տարածաշրջանային համալսարանների գյուղատնտեսական ֆակուլտետների: Ճապոնիայի 47 պերֆեկտուրաներից (մարզեր կամ շրջաններ) միայն 10-ում չկան գյուղատնտեսական կրթություն իրականացնող համալսարաններ: Սակայն, բոլոր 47 մարզերում էլ գործում են գյուղատնտեսական հատուկ վարպետացման դպրոցներ, որոնք ստեղծվել և գործում են մարզային կառավարությունների կողմից:

Մագիստրական և ասպիրանտական ծրագրերի նկարագրությունը Գյուղատնտեսական էկոնոմիկայի և հարակից մասնագիտությունների գծով

Ճապոնիայի գյուղատնտեսական կրթության մեջ հայտնի ավանդույթներ ունեցող 5 համալսարաններից Հոկայդոյի գյուղատնտեսական համալսարանն ունի 3 մագիստրական դեպարտամենտ, Տոկիոն՝ 12, Կիոտոն՝ 7, Կյոտուն 8, իսկ Տոկիոյի գյուղատնտեսական

համալսարանը՝ 13: (Ներքևում բերվում է գյուղատնտեսության և հարակից գիտությունների մագիստրատուրայի և ասպիրանտուրայի դեպարտամենտների ցանկը, տե՛ս աղյուսակ 1):

Թվում է թե, մագիստրական ծրագիր կազմելու ընթացքում գոյություն է ունեցել սեկտորային և մասնագիտական մոտեցումների խառնուրդ: Այսպես, գյուղատնտեսության, անտառագիտության և անասնաբուծության դեպարտամենտները ակնհայտորեն ծրագրված են հասցեավորելու հատուկ ոլորտների խնդիրները և հեռանկարները, մինչդեռ այնպիսի դեպարտամենտներ, ինչպիսիք են բիո-ռեսուրսների, բիո-գիտության, գյուղատնտեսության էկոնոմիկայի և շրջական միջավայրի մասին գիտությունների դեպարտամենտները հիմնված են որոշակի ակադեմիական մասնագիտությունների վրա: Պետական համալսարանների շրջանում բիո-ռեսուրսների, բիո-բիզնեսի, բիո-գիտության և շրջակա միջավայրի մասնագիտությունները լայն հեղինակություն են վայելում: (Այս տերմինները համեմատաբար նոր տերմիններ են, որոնք շրջանառության մեջ դրվեցին 90-ականների սկզբին՝ փոխարինելով գյուղատնտեսության ավանդական տերմիններին:)

Մագիստրական որակավորման համար պահանջվում է երկու տարվա հաճախում, 30 կրեդիտային ժամ, մագիստրական ատենախոսություն և քննություն, մինչդեռ ասպիրանտուրայում դասեր չեն առաջարկվում: Համարյա բոլոր դեպքերում հետքակալավրական կրթությունը պլանավորված է 5 տարի, որի ընթացքում ուսանողը գրում է երկու ատենախոսություն՝ առաջինը մագիստրի որակավորման համար (երկրորդ տարվա վերջում), իսկ երկրորդը՝ դոկտորի (Ph.D) գիտական կոչման համար (հինգերորդ տարվա վերջում): Նրանք, ովքեր չեն ցանկանում շարունակել իրենց ուսումը դոկտորի որակավորում ստանալու համար, առաջին ատենախոսությունը գրելուց հետո ավարտում են՝ ստանալով մագիստրի որակավորում:

Այժմ քննարկենք մագիստրական կրթության առանձնահատկությունները՝ Տոկիոյի գյուղատնտեսական համալսարանի օրինակով: Աղյուսակ 2-ում բերված են երեք ընտրված դեպարտամենտներում դասավանդվող առարկաները, որոնք վերաբերում են գյուղատնտեսության էկոնոմիկային: Այդ առարկաներից են. գյուղատնտեսության էկոնոմիկա, միջազգային գյուղատնտեսության զարգացում և միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրություն, որոնք նույնանուն դեպարտամենտների լավագույն առարկաներն են:

Նախ, պարզաբանենք, թե ինչ է բիո-բիզնեսը:

Բիո-բիզնեսը նեղ իմաստով վերաբերվում է մարդկության համար պիտանի կենսաբանական ռեսուրսների արտադրությանն ու զարգացմանը, իսկ լայն իմաստով բիո-բիզնեսը ընդգրկում է այդ ապրանքների վերամշակման, մատակարարման, պահեստավորման և սպառման ոլորտները:

Բիո-բիզնեսի ոլորտի ձեռնարկություններն իրենց գործունեությունը ծավալում են այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, անտառաբուծությունը, անասնաբուծությունը, ձկնաբուծությունը, այգեգործությունը, կանաչապատումը, սննդի վերամշակումը, փայտի վերամշակումը, ինչպես նաև դրանց հետ կապված մեծածախ և մանրածախ առևտուրը, ֆինանսավորումը և ապահովագրումը, տեղեկատվական և հաղորդակցության բիզնեսները:

Հասկանալով, որ սննդի գյուղատնտեսական արտադրությունը և դրա հետ փոխկապակցված ոլորտները հետապնդվում են բիո-բիզնեսի ձեռնարկությունների կողմից, Բիո-բիզնեսի կառավարման և տեղեկատվության դեպարտամենտը նպատակ է հետապնդում ուսումնասիրել բիո-բիզնեսի կառավարումն ու միջազգային գյուղատնտեսական տեղեկատվությունը, որպեսզի ղեկավարներին և մասնագետներին վերապատրաստի բիո-բիզնեսի ոլորտում և բիոբիզնեսի տեղեկատվության վերամշակման գործում:

Միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրությունները բաղկացած են 3 հիմնական ոլորտներից՝ կառավարում, տեղեկատվություն և միջավայրի պահպանության պլանավորում: Ուսումնասիրությունները նպատակաուղղված են բիո-բիզնեսի կազմակերպությունների կայուն զարգացմանը, ինչպիսիք են գյուղացիական ընտանեկան տնտեսությունները, գյուղատնտեսական կորպորացիաները, վերամշակող և մատակարարման ընկերությունները, կենսաբանական ապրանքների միջազգային առևտրականները: Այս դեպարտամենտը ուսումնասիրում է բիոբիզնեսի և բիո-արդյունաբերության կառավարման տեսությունները և գործիքները հատկապես հետևյալ ոլորտներում՝ բիոլոգիական արտադրություն, վերամշակում, մատակարարում, սպառում և թափոնների վերամշակում: Շեշտադրվում են նաև միջավայրի պահպանության խնդիրները, գյուղատնտեսության կայուն զարգացումը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարումն ու զարգացումը բիո-բիզնեսի ոլորտում:

Գյուղատնտեսության էկոնոմիկայի դեպարտամենտը Տոկիոյի գյուղատնտեսական համալսարանի մագիստրատուրայի ամենահին և ամենամեծ դեպարտամենտն է, մինչդեռ Միջազգային գյուղատնտեսության զարգացման դեպարտամենտը ստեղծվել է 20 տարի առաջ, հետագա հետազոտությունների և ուսումնասիրությունների հնարավորություն տալով հիմնականում այն մասնագետներին, ովքեր որպես փորձագետներ աշխատում են զարգացող երկրներում գործող միջազգային կազմակերպություններում: Միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրության դեպարտամենտը բավականին նոր է և սկսել է իր գործունեությունը 2002 թ:

Այս դեպարտամենտներում առաջարկվող մագիստրական ծրագրերի մի քանի հարցեր արժանի են ուշադրության:

1. Յուրաքանչյուր դեպարտամենտի մագիստրատուրայում պահանջվում են նվազագույնը 6 բարձրակարգ պրոֆեսոր, որոնցից 4 որակավորված պրոֆեսոր դասավանդելու և ուսանողների հետազոտությունները ղեկավարելու համար և 2 պրոֆեսոր՝ որակավորված դասավանդելու և ուսանողների հիմնական ղեկավարներին օգնելու համար: Տոկիոյի գյուղատնտեսական համալսարանում որակավորված պրոֆեսորների քանակը Գյուղատնտեսության էկոնոմիկայի, Միջազգային գյուղատնտեսության զարգացման և Միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրության դեպարտամենտներում համապատասխանաբար կազմում է 19, 16 և 11:
2. Մագիստրատուրաներում ուսանողներից պահանջվում է սովորել նվազագույնը 3 հիմնական առարկաների գծով: Մեր օրինակում բերած դեպարտամենտներում նախատեսված է 4 հիմնական առարկա՝ ա) Գյուղատնտեսության էկոնոմիկայի դեպարտամենտում՝ գյուղատնտեսության էկոնոմիկա, գյուղատնտեսական քաղաքականություն, գյուղացիական տնտեսությունների կառավարում և էկոնոմիկա և սննդի էկոնոմիկա բ) Միջազգային գյուղատնտեսության զարգացման դեպարտամենտում՝ բիո-ռեսուրսների զարգացում, բիո-արտադրության միջավայր, գյուղատնտեսության

զարգացման էկոնոմիկա և գյուղատնտեսության զարգացման կառավարում և խորհրդատվություն՝ գ) Միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրության դեպարտամենտում՝ միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրություն, բիո-բիզնեսի կառավարում, բիո-բիզնեսի տեղեկատվական վերլուծություն և բիո-բիզնեսի միջավայրի պահպանության պլանավորում: Վերջին երկու դեպարտամենտներում երկու հիմնական առարկաներ կապված են տնտեսագիտության և կառավարման հետ, իսկ մյուս երկուսը բնական գիտությունների և տեխնոլոգիաների հետ՝ ներկայացնելով բազմաժանր և ինտեգրացված մոտեցման օրինակ:

3. Ավարտելու համար պահանջվում է նվազագույնը 30 կրեդիտային ժամ, ուստի յուրաքանչյուր դեպարտամենտում առաջարկվում է 52-58 կրեդիտային ժամ: Ուսանողները իրենց նեղ մասնագիտացման համար դեպարտամենտի 4 հիմնական առարկաներից ընտրում են մեկը: Եթե, օրինակ, ընտրվում է գյուղատնտեսական քաղաքականություն առարկան, ապա ուսանողը պետք է գրանցվի այդ առարկան դասավանդողների ցուցակում և այդ առարկայի հետ միասին դասեր վերցնի «գյուղատնտեսական քաղաքականության սեմինար» առարկայից, յուրաքանչյուրը 4 կրեդիտային միավորով: Հիմնական առարկան նախատեսված է տվյալ ուղղությամբ գիտելիքներ ձեռք բերելու և դրանք խորացնելու համար, իսկ սեմինարը նախատեսված է տվյալ ուղղությամբ ուսանողներին հետազոտական աշխատանքներ կատարելու մեթոդոլոգիա ուսուցանելու համար: Ոչ պակաս, քան տարին երկու անգամ ուսանողները պետք է ներկայացնեն հաշվետվություն իրենց հետազոտական աշխատանքի, այսինքն ատենախոսության վերաբերյալ: Ատենախոսության պատրաստման ժամանակ հարց ու պատասխանի ձևով կազմակերպվում է հատուկ սեմինար տվյալ առարկայի գծով, որն ուսանողին տալիս է ևս 8 կրեդիտային միավոր: Այս 16 կրեդիտները պարտադիր են, իսկ լրացուցիչ 14 կրեդիտները պետք է ձեռք բերվեն այլընտրանքային առարկաներից: Ուսանողները իրավունք ունեն ձեռք բերել մինչև 10 կրեդիտային միավոր այլ դեպարտամենտներից, այսինքն՝ հաճախել այլ դեպարտամենտի կողմից առաջարկվող դասերին:
4. Փաստորեն մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների հետազոտական գործունեության և ատենախոսության ամփոփման աշխատանքներին: Ուսանողների գիտական ղեկավարը կամ խորհրդատուն նրանց ուղղություն է ցույց տալիս տվյալների հավաքման և դրանց վերլուծության, հարցումների անցկացման և հետզոտության արդյունքը ատենախոսության մեջ ճիշտ ներկայացնելու գործում:
5. Մագիստրներին և ասպիրանտներին տրամադրվում է գրասեղան, գրականություն և համակարգիչ, հիմնականում գիտական ղեկավարի աշխատասենյակում: Ֆիզիկապես շատ մոտ գտնվելով պրոֆեսորին, ուսանողը հնարավորություն է ստանում օգտվելու նրա հարուստ փորձից և խորհուրդներից:

6. Մագիստրատուրայի շրջանավարտները շատ քիչ պրոբլեմներ ունեն աշխատանքի տեղավորվելու հարցում: Շատերը աշխատում են գյուղատնտեսական կազմակերպություններում որպես փորձագետներ, մյուսները ընդունվում են աշխատանքի սննդի և առևտրային ընկերություններում, մի մասն էլ դառնում են ուսուցիչներ կամ պետական ծառայողներ: Իսկ օրինակ, Տոկիոյի գյուղատնտեսական համալսարանի դեպքում, ուսանողների 1/3-ը շարունակում է ուսումը ասպիրանտուրայում՝ դոկտորի կոչում ստանալու համար:

Եզրակացություններ

Այս հոդվածը հետապնդում էր նպատակ հակիրճ ներկայացնելու Ճապոնիայի համալսարանների մագիստրական և ասպիրանտական ծրագրերը: Հիմնականում ուշադրություն է դարձվել գյուղատնտեսության էկոնոմիկային: Չնայած գյուղատնտեսության և հարակից գիտությունների մագիստրական և ասպիրանտական ծրագրերը իրենց չափերով փոքր են, և միայն նախկին թագավորական համալսարաններն են հիմնականում մեծ գիտական կենտրոնները, ասպիրանտական և մագիստրական ծրագրեր առկա են ամբողջ երկրով մեկ: Օգտվելով Տոկիոյի գյուղատնտեսական համալսարանի օրինակից՝ հոդվածում ներկայացվեցին այն առարկաները, որոնք դասավանդվում են գյուղատնտեսական էկոնոմիկայի և հարակից ճյուղերի գծով մագիստրական ծրագրերում: Գործնական աշխատանքի համակարգը, որի շնորհիվ ուսանողները շատ սերտ բարեկամական կապեր են հաստատում իրենց պրոֆեսորի հետ և ստանում են հետազոտական աշխատանքներ կատարելու հնարավորություններ և միջոցներ, հեղինակի կողմից դիտվել է իբրև Ճապոնիայի մագիստրական և ասպիրանտական ծրագրերի եզակի առանձնահատկություն:

Akagi, S. (2001) “Agriculture and Environmental Education I Upper Secondary School in Japan.” Paper presented at 1st International Conference on Agriculture Education and Environment, Oct. 16-20, 2001, IRRI, Los Banos, Philippines.

Aso, M. and I. Amano (1983), Education and Japan’s Modernization, The Japan Times Ltd., Tokyo.

Fujimoto, A. (2003) “Studying for Master’s Degree in Agriculture and Related Fields in Japan.” Paper presented at the Third International Conference of the Global Consortium of Higher Education and Research for Agriculture, “Global Reforms in Higher Agricultural Education and Research: Responding to Challenges to Quality and Safety of Food and Agricultural Products,” September 22-24, 2003, Kiev, Ukraine.

Matsuda, T. (2003) “Agricultural Education at the University Level.” (In Press).

Tajima, S. (1996) “Agricultural Education System in Asia.” A resource paper contributed to the APO Study Meeting, Sept. 6-10, 1994, Seoul, Republic of Korea.

Աղյուսակ 1. Ճապոնիայի գյուղատնտեսության և հարակից գիտությունների գծով գլխավոր մագիստրատուրաների և ասպիրանտուրաների գյուղատնտեսական գիտությունների մասնագիտական ուղղությունները (2003):

Համալսարաններ	Մագիստրատուրաների և ասպիրանտուրաների դեպարտամենտները	Ուսանողների քանակը	
		Մագիստր	Ասպիր.
Հոկայդո (Գյուղատնտեսություն)	Բիո-ռեսուրսների արտադրության	57	27
	Շրջակա միջավայրի ռեսուրսների	48	23
	Կիրառական կենսագիտության	39	19
	Ընդամենը (3)	144	69
Տոկիո (Գյուղատնտեսություն և կենսագիտություն)	Արտադրության և շրջակա միջավայրի բիոլոգիայի	28	13
	Կիրառական կենսաքիմիայի	34	16
	Անտառագիտության	20	10
	Ջրի կենսաբանության	30	15
	Գյուղատնտեսության և ռեսուրսների էկոնոմիկայի	17	8
	Բիո-միջավայրի ճարտարագիտության	17	8
	Բիո-նյութական գիտության	17	8
	Կիրառական կենսատեխնոլոգիայի	41	19
	Կիրառական անասնաբուծության	19	8
	Միջազգային գյուղատնտեսության	43	19
	Բիո և էկոսիստեմների	25	18
	Անասնաբուժական և դեղագործության		13
	Ընդամենը (12)	291	155
Կիոտո (Գյուղատնտեսություն)	Գյուղատնտեսության	23	11
	Անտառագիտության	45	22
	Կիրառական բիո-գիտության	48	22
	Կիրառական կենսագիտության	50	23
	Տարածքային բնապահպանական գիտությունների	48	22
	Բիո-ռեսուրսների էկոնոմիկայի	24	11
	Սննդի կենսաբանության	25	11
	Ընդամենը (7)	263	122
Կյոշու (Բիո-ռեսուրսների միջավայրի պահպանություն)	Բիո-ռեսուրսների զարգացման և կառավարման	21	10
	Բուսաբանական ռեսուրսների	29	14
	Բիոֆունկցիոնալ գիտության	29	14
	Կենդանաբանական ռեսուրսների գիտության	17	8
	Գյուղատնտեսական ռեսուրսների էկոնոմիկայի	10	5
	Արտադրության միջավայրի գիտության	17	8
	Անտառային ռեսուրսների գիտության	31	15
	Մոնոկլոնար ռեսուրսների գիտության	21	9
Ընդամենը (8)	175	83	
Տոկիոյի գյուղատնտեսական համալսարան (Գյուղատնտեսություն)	Գյուղատնտեսության	14	5
	Անասնաբուծության	12	4
	Գյուղատնտեսական քիմիայի	25	5
	Ֆերմենտացիայի և տեխնոլոգիայի	12	2
	Սննդի էկոնոմիկայի	12	2
	Բիո-գիտության	30	5*
	Անտառագիտության	12	4
	Գյուղատնտեսական ճարտարագիտության	8	2
	Լանդշաֆտային ճարտարապետության	12	3
	Միջազգային գյուղատնտեսության զարգացման	12	2
	Գյուղատնտեսության էկոնոմիկայի	10	5
	Միջազգային բիո-քիմիայի ուսումնասիրության	12	5*
	Բիո-օրենսդրական ուսումնասիրությունների		8
Ընդամենը (13)	186	60	

Fujimoto A. 2003.

*Կներգրավվեն 2004թ. Ապրիլից

Աղյուսակ 2. Գյուղատնտեսության էկոնոմիկայի, Միջազգային գյուղատնտեսության զարգացման և Միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրության մագիստրական դեպարտամենտների հիմնական առարկաները: **Տոկիոյի գյուղատնտեսական համալսարան (2003)**

Առարկաներ	Կրեդիտներ
Գյուղատնտեսության էկոնոմիկայի դեպարտամենտ	
Գյուղատնտեսության էկոնոմիկա	4
Գյուղատնտեսության էկոնոմիկայի սեմինար	4
Գյուղատնտեսական քաղաքականություն	4
Գյուղատնտեսական քաղաքականության սեմինար	4
Գյուղացիական տնտեսությունների կառավարում և էկոնոմիկա	4
Գյուղացիական տնտեսությունների կառավարման և էկոնոմիկայի սեմինար	4
Սննդի էկոնոմիկա	4
Սննդի էկոնոմիկայի սեմինար	4
Գյուղատնտեսական իրավունք և օրենսդրություն	4
Սննդի արդյունաբերության էկոնոմիկա	2
Սննդի միջավայրի էկոնոմիկա	2
Գյուղատնտեսական առևտուր	2
Գյուղատնտեսության պատմություն	2
<i>Գյուղատնտեսության էկոնոմիկայի հատուկ սեմինար</i>	8
Ընդամենը	52
Միջազգային գյուղատնտեսության զարգացման դեպարտամենտ	
Միջազգային գյուղատնտեսության զարգացում	4
Բիո-ռեսուրսների զարգացում	4
Բիո-ռեսուրսների զարգացման էքսպերիմենտներ	2
Բիո-արտադրության միջավայր	4
Էքսպերիմենտներ բիո-արտադրության միջավայրում	2
Գյուղատնտեսության զարգացման էկոնոմիկա	4
Գյուղատնտեսության զարգացման էկոնոմիկայի սեմինար	2
Գյուղատնտեսության զարգացման կառավարում և խորհրդատվություն	4
Գյուղատնտեսության զարգացման կառավարման և խորհրդատվության սեմինար	2
Արևադարձային կուլտուրաների գիտություն	2
Արևադարձային այգեգործություն	2
Գյուղատնտեսական ապրանքների պահեստավորում	2
Վնասատուների դեմ պայքար	4
Շրջակա միջավայրի պահպանություն	2
Գյուղատնտեսության զարգացման քաղաքականություն	4
Գյուղատնտեսության զարգացման կոոպերացիա	2
Միջազգային տնտեսագիտություն	2
Գյուղատնտեսության զարգացման կրթություն	4
Տարածաշրջանային գյուղատնտեսության զարգացում	2
<i>Միջազգային գյուղատնտեսության զարգացման հատուկ սեմինար</i>	8
Ընդամենը	58
Միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրության դեպարտամենտ	
Միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրություն	4
Միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրության սեմինար	2
Բիո-բիզնեսի կառավարում	4
Բիո-բիզնեսի կառավարման սեմինար	2
Բիո-բիզնեսի տեղեկատվական վերլուծություն	4
Բիո-բիզնեսի տեղեկատվական վերլուծության սեմինար	2
Բիո-բիզնեսի միջավայրի պահպանության պլանավորում	4
Բիո-բիզնեսի միջավայրի պահպանության պլանավորման սեմինար	2
Բիո-բիզնեսի մարդաբանություն	4
Վերազգային կորպորացիաներ	4
Գյուղատնտեսական ապրանքների միջազգային մարքեթինգ	4
Բիո-բիզնեսի ղեկավարներ և ձեռնարկչատիրական գործունեություն	2
Միջազգային գյուղատնտեսական տեղեկատվական ցանց	2
Համակարգչային հաշվապահություն բիո-բիզնեսի մեջ	2
Միջավայրի պահպանության բիզնես	2
Էկոսիստեմների պահպանության գյուղատնտեսություն	2
<i>Միջազգային բիո-բիզնեսի ուսումնասիրության հատուկ սեմինար</i>	8
Ընդամենը	54

Система сельскохозяйственного образования в Японии

Вардан Урутян, к.э.н.

Преподаватель, исследователь и советник
Департамента агробизнеса АрмСхА

В статье представлено краткое описание программ магистратуры и аспирантуры университетов Японии. Особое внимание уделено экономике сельского хозяйства. Несмотря на то, что магистерские и аспирантские программы сельскохозяйственных и смежных наук невелики по своим объемам и только бывшие императорские университеты являются крупными научными центрами, программы магистратуры и аспирантуры существуют по всей Японии. На примере Сельскохозяйственного университета Токио в статье представлены те учебные курсы, которые преподаются в магистерских программах экономики сельского хозяйства и смежных отраслей. Благодаря системе практических работ, студенты работают бок о бок с профессорами и получают возможности и средства для проведения исследовательских работ, что и было замечено со стороны автора как особенность магистерских и аспирантских программ Японии.

Agricultural Education System in Japan

Vardan Urutyanyan, PhD

Lecturer, Researcher, Advisor

Agribusiness Department, AAA

USDA MAP

This article was aimed to be a concise introduction to graduate study programs in Japanese universities. A special reference was given to agricultural economics. In spite of the fact that many of the graduate programs in agriculture and related fields appeared to be rather small in size, and the former imperial universities are the major research centers, graduate study programs exist throughout the country. Using the case of Tokyo University of Agriculture (TUA), this article presented the courses offered by master programs in and related to agricultural economics. Laboratory system, under which students closely relate to their supervising professors, was considered a remarkable feature of the graduate study programs in Japan.